

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թույլ տվեք «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն, Ձեր ուշադրությանն ու քննարկմանը ներկայացնել Վարդենիսի քաղաքային համայնքի ղեկավարի 2011թ. հունվար---դեկտեմբեր հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետվությունը Ձեր ուշադրությանն են ներկայացնում օրենքով ինձ վերապահված լիազորությունների շրջանակներում:

1. Իրավական փաստաթղթերի ընդունման ուղղությամբ.

Անցած ժամանակաշրջանի ընթացքում հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 15 նիստեր, ընդունվել տարբեր բնույթի 122 որոշումներ: Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու որոշումները օրենքով սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ Գնդարքունիքի մարզպետարան: Կատարված գործունեության հրապարակայնության և թափանցիկության պահպանման նպատակով ընդունված որոշումները փակցվել են բնակչությանը տեսանելի մարդաշատ վայրերում:

Այս ժամանակաշրջանում ընդունվել են Վարդենիսի քաղաքապետի 280 որոշումներ, 87 կարգադրություններ, և աշխատակազմի քարտուղարի 45 հրամաններ: Բոլոր իրավական փաստաթղթերը նպատակաուղղված են եղել Վարդենիսի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման, ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման, բնակչության հանգստի, հոգևոր և մասսայական մշակութային միջոցառումների կազմակերպման, երեխաների և պատանիների նախադպրոցական դաստիարակության, մարզական,

գեղագիտական, երաժշտական կրթության մատուցման կազմակերպման ֆինանսավորման խնդիրներին:

2. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության և սոցիալական բնագավառում:

1. 2011թ. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվել է քաղաքացիների ընդունելություն, որտեղ լսվել և ընդունվել են նրանց պահանջներն ու առաջարկությունները: Դիմումներն ու բողոքները ուսումնասիրվել և ժամանակին տրվել է համապատասխան ընթացք:

Ընդհանուր առմամբ քաղաքացիների կողմից ընդունվել են տարբեր բնույթի **770** դիմումներ: Դիմումների պահանջը հնարավոր սահմաններում բավարարել ենք:

Սոցիալապես անապահով պայմաններում գտնվող **157** քաղաքացիների համայնքի բյուջեից տրամադրվել է **4520.0 հազ.** դրամի ֆինանսական օգնություն:

2. Մի շարք քաղաքացիների իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով ՀՀ ոստիկանություն և դատարաններ են ներկայացվել միջնորդագրեր, բնութագրեր, անհրաժեշտ այլ իրավական փաստաթղթեր:

3. Բնակիչներին տրվել են տարբեր բնույթի տեղեկանքներ:

4. Խնամակալության կարիք ունեցող անչափահաս երեխաների նկատմամբ սահմանվել է խնամակալություն:

5. Գեղարքունիքի մարզպետարանի միջոցով բնակիչներին աջակցել ենք Երևան քաղաքում պետ պատվերի շրջանակներում բուժում ստանալու համար:

3. Համայնքի ղեկավարի գործունեությունը բյուջեի կատարման և ֆինանսների բնագավառում

Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանու կողմից 2011թ. համար հաստատվել է **296126.2** հազ. դրամի տարեկան բյուջե, որից վարչական մասը կազմել է **196126.2** հազ , իսկ ֆոնդային մասը **100** միլիոն դրամ:

2011թվականի համար համայնքի բյուջեի վարչական մասը կատարվել է.

1. Սեփական եկամուտներ՝

Պլանավորված 32732.5 հազ. դրամի դիմաց կատարվել է 36537.5 հազ. դրամ, այսինքն՝ 112 %-ով:

2. Դոտացիան պետական բյուջեից՝

Պլանավորված 156836.7 հազ. դրամի դիմաց կատարվել է 156836.7 հազ. դրամ, այսինքն՝ 100 %-ով:

Ընդամենը վարչական բյուջեն կազմել է 196126.2 հազ. դրամ, փաստացի կատարվել է 199931.2 հազ. դրամ, այսինքն՝ 102%-ով:

Վարդենիսի քաղաքային համայնքի բյուջեի ծախսային մասը կատարվել է մուտքային մասին համապատասխան:

4. Հասարակական կարգի պահպանության բնագավառում:

Վարդենիս քաղաքում քաղաքապետարանի և ՀՀ Ոստիկանության Վարդենիսի տարածքային բաժնի համատեղ գործունեության շնորհիվ հասարակական կարգի խախտման դեպքեր ընթացիկ ժամանակաշրջանում չեն արձանագրվել, համայնքի բնակիչները ապրում են հանգիստ ու խաղաղ պայմաններում:

Վարդենիս **քաղաքի 43 քաղաքացիների** կողմից 2011թվականի ընթացքում թույլ են տրվել վարչական իրավախախտումներ, որոնք գործող օրենքի շրջանակներում ենթարկվել են վարչական տուգանքի:

5.Գործունեությունը պաշտպանության բնագավառում:

Վարդենիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ մջոցառումները, համագործակցել տարածքային զինվորական կոմիսարիատի հետ՝ գորակոչը բարձր մակարդակով կազմակերպելու գործում:

Տարածքային զինվորական կոմիսարիատի հետ նախապատրաստել և արդեն անցկացրել ենք նախապես պլանավորված պահեստային զինծառայողների զորահավաքը:

Պարբերաբար զբաղվել ենք Հայրենական Մեծ Պատերազմի, Արցախյան Գոյամարտի մասնակիցների, վետերանների, զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման հարցերով, հնարավորության սահմաններում նրանց նկատմամբ ցուցաբերելով նյութական, ֆինանսական և բարոյական օգնություն:

6. Քաղաքաշինության, գյուղատնտեսության և կոմունալ տնտեսության բնագավառում:

Վարդենիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում Վարդենիս քաղաքում իրականացվող քաղաքաշինական խնդիրները:

Մենք հնարավոր ամեն ինչ անում ենք Վարդենիս քաղաքը քաղաքաշինական նորմաներով կառուցելու և ավելի բարեկարգ ու բարեկենս դարձնելու համար:

Քաղաքաշինության վերաբերյալ ստացվել են **52 դիմումներ, որոնցից 35-ը ստացել են իրենց պատասխանները, իսկ մնացածը ընթացքի մեջ են:**

Անցած տարվա ընթացքում քաղաքացիներին տրամադրվել են 19 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ և 8 շինարարության թույլտվություն:

Մեր կողմից արվելու է ամեն ինչ բարձրացնելու շինարարական աշխատանքների որակը, ակտիվացնելու քաղաքի կառուցապատման գործընթացը:

• Գյուղատնտեսության բնագավառ

Վարդենիս քաղաքը և համայնքային գյուղատնտեսական նշանակության հողամասերը հիմնականում գտնվում են ծովի մակարդակից 2000-2300 մետր բարձրության վրա, որոնք ենթարկված են էրոզիայի, անջրդի են, քիչ եկամտաբեր: Հետևաբար բնակչության շահագրգռվածությունը հողօգտագործման նկատմամբ ցածր է:

Քաղաքապետարանի կողմից ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները՝ նորագույն գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու ուղղությամբ, ինչպես նաև անջրդի հողերը ինչ որ ձևով ջրարբիացնելու:

2011 թվականի ընթացքում Վարդենիսի քաղաքացիներին տրվել է 23.0 տոննա գարու և 26.4 տոննա ցորենի սերմացու, որի արդյունքում բարձրացել է հողօգտագործողների շահագրգռվածությունը:

Անասնապահությանը զբաղվող բնակիչներին օգնելու նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ միասին, քաղաքում իրականացնում ենք անասնաբուժական ծառայություն, անասունների հիվանդությունների կանխարգելման, վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելով:

- **Կրմունալ տնտեսության բնագավառ**

Վարդենիս քաղաքի աղբահեռացումն ու սանմաքրումը շուրջօրյա է, կանաչապատ տարածքները պահպանվում են, կատարել ենք ծառատունկ և ծառերի էտում:

Վարդենիս քաղաքի բազմաբնակարան շենքերը գտնվում են անմխիթար վիճակում, որոնց վերանորոգման համար անհրաժեշտ են մեծ ֆինանսական միջոցներ: Մենք պետք է կարողանանք ներդրողներ գտնել՝ հարցը լուծելու համար:

2011թվականին մեր միջոցներով վերանորոգել ենք Լեռնագործների 1/2 բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը:

2012թվականին հրատապ ծրագրի շրջանակներում հիմնանորոգվելու է մեկ բազմաբնակարան բնակելի շենքի կտուր՝ 20միլիոն նախահաշվային արժեքով:

Իրավիճակը կարգավորելու համար անհրաժեշտ է ստեղծել համատիրություններ:

7. Տրանսպորտի, առևտրի ծառայությունների բնագավառում:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից ձեռնարկվել են միջոցներ քաղաքի տարածքում մարդատար տարսիների աշխատանքը կանոնակարգելու

համար, նրանց տրվել է քաղաքում գործելու թույլտվություն: Քաղաքի տարբեր հատվածներում անհատ ձեռներեցներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվել է առևտրի և սպասարկումների ծառայության իրականացման թույլտվություն՝ բնակչության սպասարկումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Քաղաքի գրեթե բոլոր թաղամասերում տեղակայված խանութներում և հասարակական այլ սպասարկման օբյեկտներում, բնակչության կարիքները բավարարելու նպատակով թույլատված է հասարակական սննդի, կենցաղային ապրանքների, ծխախոտի, ոգելից խմիչքների, հեղուկ վառելիքի, հեղուկացված գազերի և այլ անհրաժեշտ նյութերի և ապրանքների առևտուր:

8. Կրթության, մշակույթի, սպորտի և նրիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում:

Այս բնագավառը հանդիսանում է մեր նրելխանների, պատանիների ու նրիտասարդների դաստիարակության համար անհրաժեշտ ամենակարևոր բնագավառը: Քաղաքապետարանի համակարգում գործում են 3 մանկապարտեզներից 2-ը, թիվ 1 և քաղաքային մարզադպրոցները, թիվ 1 և թիվ 2 նրաժշտական դպրոցները, գեղարվեստի դպրոցը, քաղաքային և մանկական գրադարանները, մշակույթի տունը:

2012թվականից հիմնովին ջեռուցված և մասնակի վերանորոգված Վարդենիսի թիվ 2 մանկապարտեզը գործելու է շուրջտարյա ռեժիմով:

Հիմնովին վերանորոգման փուլում է Վարդենիս քաղաքի Մհեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատը, որը զգալի աշխատանքներ է կատարում տարածաշրջանում մշակութային կյանքը բարձր մակարդակի վրա պահելու համար: Նրանց խմբերի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում և անցկացվում են բազմաբնույթ ավանդական դարձած միջոցառումներ, նվիրված ազգային ու պետական տոներին:

Անցած տարվա ընթացքում տոնական միջոցառումներ ենք կազմակերպել նվիրված Հայոց ազգային բանակի ստեղծման, կանանց միջազգային օրվան, Անկախության օրվա առթիվ: Մայրության և Գեղեցկության օրվա առթիվ շուրջ 700 կանանց և աղջիկների տրվել են հուշանվերներ: Հայրենական մեծ պատերազմի վետերաններին , Արցախյան գոյամարտի ժամանակ զոհված ազատամարտիկների ընտաիքներին և Աֆղանստանի պատերազմի վետերաններին տրամադրվել է դրամական օգնություն:

Մեպտեմբերի 1-ին Վարդենիս քաղաքի թվով 187 առաջին դասարանցիների տրվել են պայուսակներ:

Վարդենիսի քաղաքապետարանը մեծ ուշադրություն է դարձնում մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության գործին: Մեր սաները հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել են հանրապետական, մարզային, և միջազգային տարբեր մրցաշարերի և հասել լուրջ հաջողությունների, դարձել հաղթողներ և մրցանակակիրներ:

Մասնակցել ենք 5-րդ համահայկական խաղերին:

2011թ-ին մասնակցել ենք Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացվող մարզական փառատոնին՝ գրավելով պատվավոր 2-րդ տեղը:

Լուրջ հաժողություններ ունենք «Վարդենիսի թիվ 1 և թիվ 2» նրաժշտական և «Գեղարվեստի» դպրոցներում: «Վարդենիսի թիվ 1 և թիվ 2» նրաժշտական դպրոցների միջև անցկացրել ենք փառատոն, հաղթողները քաղաքապետարանի կողմից արժանացել են պատվոգրերի և նվերների: Գեղարվեստի դպրոցի սաները իրենց անհատական աշխատանքներով՝ նկարներով, քանդակներով մասնակցել են բազմաթիվ ցուցահանդեսների, որոնք կազմակերպվել են Վարդենիս քաղաքում, ինչպես նաև Հանրապետության մայրաքաղաք Երևանում:

Մանկապարտեզներում կազմակերպվել է բազմաթիվ հանդեսներ, համերգներ և բազմաբնույթ այլ միջոցառումներ: Ամենակարևորը վերանորոգել և ջնշուցել ենք թիվ 2 մանկապարտեզը, ժամանակակից

պահանջներին համահունչ, հիմնանորոգել ենք թիվ 2 ՄԵԴ շենքի առաջին հարկը, որտեղ գործում են համակարգչային կենտրոն և մանկապարտեզ:

Վարդենիսի քաղաքային և մանկական գրադարաններում կազմակերպել ենք գրքերի քննարկումներ, գրական հանդեսներ և միջոցառումներ:

9. Վարդենիս համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկ ձեռնարկություններում անցկացված ստուգումների մասին:

Վարդենիսի քաղաքային համայնքի գործունեությունը ստուգվել է Վերահսկիչ պալատի կողմից, որի արդյունքում ընդհանուր գործունեությունը գնահատվել է բավարար:

Ավարտելով խոսքս հավաստիացնում եմ, որ չենք բավարավելու հաշվետվությունում ներկայացված ձեռքբերումներով և անձամբ իմ, համայնքի ավագանու, աշխատակազմի անդամների ուժերը այսուհետ նույնպես նպատակաուղղելու ենք համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.ԽԼՈՅԱՆ

<<_____>>_____ 2012թ.